

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

XIX դ.—XX դ. սկզբի կովկասագիտական գրականության մեջ արձանագրվել է, որ XVIII դ. վերջին—XIX դ. սկզբին Արևելյան Անդրկովկասում հողը պետության սեփականություն էր, իսկ «բարձր դասի» մարդիկ, այդ թվում մուլքադարներն ու թիուդարները Երևանի և Նախիջևանի խանություններում արքունի հողային (հարկային) եկամուտների բաժնետերեր էին¹։ Միաժամանակ առանձին հեղինակներ վերապահումներով են խոսել խանություններում հողային սեփականության պետական ձևի անբաժան տիրապետման մասին։ Այդ իմաստով առավել ուշագրավ են Ն. Տորնաուի և Ս. Եղիազարյանցի որոշ դրույթներ, որոնք մեր պատմագիտական գրականության մեջ, սկսած 1940-ական թվականներից, վկայաբերվել են որպես մուլքադարության (այսպիսով XVIII դ. երկրորդ կեսի—XIX դ. սկզբի թիուդարության) և հողի մասնավոր կալվածատիրական սեփականության նույնությունը հավաստող պատմագրական փաստեր։ Առանձնապես մուլքի և մուլքադարական իրավունքի բնորոշման առթիվ ծավալված բանավեճն ընդգծում է այդ դրույթների ստույգ գնահատման կարևորությունը։

Իրոք, ըստ Ն. Տորնաուի «մուսուլմանական երկրներում» հողի «բարձրագույն տնօրինման իրավունքը չէր բացառում մասնավոր սեփականության գոյության հնարավորությունը»², իսկ Ս. Եղիազարյանցի համոզմամբ XVI—XIX դդ. Հայաստանում դրա գոյությունն անտարակուսելի իրողություն էր³։ Այսուհանդերձ, մենք պնդում ենք, որ այս երկու հեղինակները ևս հեռու էին մուլքադարությունից ու XVIII դ. վերջի—XIX դ. սկզբի թիուդարությունից հողի մասնավոր սեփականության հետ նույնացնելու մտքից։ Այդ առթիվ մեռ մի շարք հետազոտողների շտապ եզրակացությունները չեն հիմնավորվում նրշված դրույթների համակողմ բնությամբ։

Ա. Եսայանը մուլքադարությունը բնորոշելով իբրև հողի խոշոր ֆեոդալական մասնավոր սեփականության (ալլոդին ու ռուչինային համընկնող) ձև⁴ և այդ կապակցությամբ վկայակոչելով նաև Ն. Տորնաուի վերոհիշյալ ամփոփու-

¹ И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852, с. 925—926; С. П. Зелинский, Племенной состав, религия и происхождение государственных крестьян Закавказского края («Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края»), (այսինքն) «Свод материалов», т. II, Тифлис, 1887, с. 66—68; С. А. Егiazаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, «Сельская община» (այսինքն) «Сельская община», Казань, 1889, с. 292; М. Н. Кучаев, Феодализм и закрепощение в Закавказье («Русский вестник», 1893, январь, с. 320—321); С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, с. 547; Л. Ф. Тигранов, Из общественно-экономических отношений в Персии, СПб., 1909, с. 1—3; В. Линден, Высшие классы коренного населения Кавказского края, Тифлис, 1917, с. 22—23 и др.

² Н. Е. Торнау, О праве собственности по мусульманскому законодательству, СПб., 1882, с. 75.

³ «Сельская община», с. 137—138, 150.

⁴ А. М. Есаян, Мулькадарское право в Армении, Ереван, 1948, с. 49.

մը՝ նրան հակադրել է XIX դ. կովկասագիտության մյուս ներկայացուցիչներին⁵։ Ա. Շապյանի համոզմամբ տվյալ ամփոփումը նպաստում է հողային սեփականության հարցի այնպիսի լուծմանը, որից «շատ բանով կախված է մուլքադարների հողատիրական իրավունքների շրջանակի պարզաբանումը»⁶։ Բայց բանն այն է, որ Ն. Տորնաուի⁷ խնդրո առարկա դրույթներն ու եզրակացությունը քննվ չեն շրջափում մուլքադարական իրավունքի (մուլք-գյուղատիրության) հարցը՝ նա նկատի է ունեցել. ա) տարբեր մարդկանց սեփական տնտեսությունների եկամտաբեր հողվածները՝ արդեն մշակված (օմարե) հողամասերը, սրանց տնօրինման իրավունքը չկապելով տերերի դասային պատկանելիության հետ, բ) անհատական նախաձեռնությամբ ոռոգելի ու մշակելի դարձած, ցանկապատված կամ շինության տակ դրված, նաև ճահճուտից, մացառուտից աղատված «մեռյալ» տեղերը (մավաթ), որոնք «իմամի թույլտվությամբ» կարող էին լինել մշակողի սեփականությունը⁸։ Ըստ Ն. Տորնաուի, օրենսդիրը հաշի էր առնում հողի «կենդանացումը» վկայող ձեռնարկումները մշակման առաջին երեք տարիներին, այսինքն՝ տիրման և անընդմեջ օգտագործման վաղեմությունը⁹։ Այդպիսով, մավաթը կարող էր վերածվել օմարեի, որը տարբեր տերերի համար ուներ առաջացման այլ աղբյուրներ ևս՝ օտարում-գնում, ժառանգական փոխանցում։ Անշուշտ, մավաթ և օմարե հողեր կայող էին տիրել նաև տվյալ վայրում կամ այլուրեք գտնվող գյուղերի մուլքադարները։ Եվ կարելի էր կարծել, թե Ա. Շապյանը հենց այդ նկատառումով է փաստարկել Ն. Տորնաուի դրույթները՝ ոչ թե հատկապես մուլք-գյուղատիրության, այլ մուլքադարների, իբրև առանձին տնտեսատերերի, հողատիրական իրավունքների շրջանակի պարզելու համար։ Բայց սույն կապակցությամբ պետք էր հստակ ընդգծել, որ մի դեպքում խոսքը վերաբերվելու էր բուն իսկ մուլքադարությանը՝ մուլքադարի ու նրան մուլքատու գյուղացիների որոշակի փոխհարաբերություններով, մյուս դեպքում՝ անհատ տնտեսատիրոջ անմիջական հողատիրությանը, որը կապ չուներ մուլքադարության հետ։ Մինչդեռ տարակուսանք է հարուցում այն պնդումը, թե տիրող դասակարգի ներկայացուցիչները (ուրեմն՝ և մուլքադարները) մավաթ հողերի մշակման «աշխատանքների համար հավաքագրում էին սեփական գյուղացիներին»¹⁰։ Ի՞նչ սկզբունքով էր հավաքագրվում այդ աշխատուժը և ինչպե՞ս հասկանալ սեփական գյուղացիները բնորոշումը՝ պարզ չէ։ Մեզ հասաբերող հարցի այլիմաստ և ասույզ պատասխանը գտնում ենք Հ. Փափաղյանի հետադոտություններում. XVI—XVIII դդ. առանձին ունեւորների ու ֆեոդալների ջանքերով ոռոգված և մշակելի դարձված հողերը (որոնք արաբերեն կոչվում էին մադրայե—«ցամաքատեղ», «դաշտ», «ագարակ») սովորաբար մշակվում էին ընչազուրկ վարձկան հողագործների միջոցով կամ, բերքի որոշ մասը հողագործին թողնելու պայմանով, տրվում էին օգտագործման մենատնտես գյուղացիներին¹¹։

Ն. Տորնաուի մեկնաբանությամբ վերը նշված հողերի սեփականատիրումը հանդում էր անժամկետ ժառանգական տնօրինման. օրենսդիրն ընդգծել է միայն, որ մեկ ուրիշը չի կարող, առանց հողը «կենդանացնողի» ու տիրողի թույլտվության, որևէ ձեռնարկի դիմել տվյալ հողամասում, բայց վերջինիս գերագույն տնօրենը լիմամն էր՝ մուսուլմանների գլխավորը¹², վերջապես Ն.

⁵ Նույն տեղում, էջ 25, 29—30։

⁶ Նույն տեղում, էջ 22։

⁷ Н. Е. Торнау, Изложение начал мусульманского законовещения, СПб., 1850, с. 449—452.

⁸ Նույն տեղում։

⁹ А. М. Есаян, *նշվ. աշխ.*, էջ 51.

¹⁰ *Տե՛ս «շալ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 264, А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972, с. 195—197.*

¹¹ Н. Е. Торнау, Изложение начал мусульманского законовещения, с. 449—452.

Տորնաուն եվրոպական հեղինակներից կատարել է իր համար ընդունելի մեջբերումներ, որոնց համաձայն հողը «մուսուլմանական ողջ համայնքի սեփականությունն» էր, քանի որ, իսլամական օրենսդրությամբ, «նվաճված երկրներում կարող է գոյություն ունենալ միայն հողօգտագործման, բայց ոչ սեփականատիրման իրավունք»¹²:

Ինչ վերաբերում է Արևելյան Անդրկովկասի «բարձր դասի» իրավունքներին՝ սրանց լայն սոցիալ-դասակարգային բովանդակությամբ, ապա հաշիվ թե կարելի է խոսել այդ առթիվ Ն. Տորնաունի և XIX դ. մյուս հեղինակների դրույթների տարբերության մասին: Նրա կարծիքով խան, բեգ և այլ տիտղոսները «փոխանցվում էին ժառանգաբար, բայց մուսուլմանական երկրներում ո՛չ դրանք, ոչ էլ նշանավոր ցեղին կամ ընտանիքին պատկանելը չեն ընձեռում հատուկ իրավունքներ՝ ո՛չ դասային, ո՛չ անձնական տեսակետից»¹³: Անշուշտ, այստեղ ակնբախ է արտոնյալների դասային վիճակի թյուրմեթոնումը, որը մեր համոզմամբ հետևանք էր հողային և սոցիալ-դասարակական հարաբերությունների՝ տեսականորեն սխալ մեկնաբանության:

Մեր գրականության մեջ լայն արձագանք է գտել XIX դ. վերջի—XX դ. սկզբի կովկասագիտության նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ս. Նդիազարյանցի, եզրակացությունը XVI—XIX դդ. Հայաստանում հողի մասնավոր սեփականության առկայության մասին: Ի. Պետրուշևսկին փաստանքով նշել է, որ Ս. Նդիազարյանցը, մի կողմից, իր այդ եզրակացության ոգով, մուլքը դիտում է իբրև հողի ժառանգական մասնավոր տիրում (ինչն-ընդունելի է նաև Ի. Պետրուշևսկու համար), մյուս կողմից՝ «մուլքադարական իրավունքի էությունը տեսնում է նրանում, որ խաներն ու սարդարները ժառանգող դասի մարդկանց դյուղեր էին պարգևաշնորհում, այլ կերպ ասած՝ գտնում է, որ մուլքի տիրումը պայմանավորված էր պետական ծառայությամբ»¹⁴: Առաջին դեպքում, ըստ Ի. Պետրուշևսկու, Ս. Նդիազարյանցը հակադրվում էր մյուս կովկասագետներին, երկրորդ դեպքում՝ հետևում նրանց, ովքեր «շխատելով մուլքերի ժառանգման փաստը... ժխտում էին մուլքերի առևտրային գոյությունը»¹⁵: Վ. Ռշտունին վերաշարադրել է այս գնահատականը¹⁶:

Մեր կարծիքով, Ս. Նդիազարյանցի նշված դրույթները հակասական չեն, այլ ներկայացնում են «մուլքը»՝ երկու տարբեր բովանդակությամբ: Նախ, ուշադրության առնենք նրա այն սողերը, որոնք մատնացույց է արել Ի. Պետրուշևսկին: Առաջին դեպքում Ս. Նդիազարյանցը նկատի է ունեցել գյուղական համայնքի «հողատեսքերի կազմում բացառիկ իրավաբանական վիճակ զբաղեցնող»¹⁷ ցանկապատված տեղերը, տնամերձերն ու այգիները, որոնք «գտնվելով առանձին ընտանիքների տիրության տակ, սովորույթի իրավունքով ճանաչվում էին որպես տիրողի մուլք (կալվածք) և մտնում նրա լիակատար տնօրինման մեջ»¹⁸: Այդ մուլքերը «հնում կարող էին լինել ամեն մի հատուցվող և անհատույց քաղաքացիական գործարքի առարկա»¹⁹, դրանց տիրման իրավունքը փոխանցվում էր ժառանգաբար և դադարում միայն ծխի անհատացմամբ²⁰: Ապա Ս. Նդիազարյանցն ընդգծել է, որ նույնիսկ XIX դ. երկրորդ կես-

¹² Н. Е. Торнау, Мусульманское право (выпуск I, О праве наследства по закону), СПб., 1866, с. 17.

¹³ Նույն տեղում, էջ 48—50:

¹⁴ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949, с. 222—223.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա, Երևան, 1960, էջ 28:

¹⁷ «Сельская община», с. 148.

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

սում, ընայած պետական հողի առուծախն արգելող կարգադրություններին, հատկապես մասնատիրական գյուղերի բնակիչներն ավանդաբար շարունակում էին ցանկապատված տեղերը, այգիներն ու տնամերձները դիտել իբրև տիրոջների սեփականություն²¹:

Երկրորդ դեպքում Ս. Եղիազարյանցը նկատի է ունեցել մուլք-գյուղատիրություն-բաճրատիրությունը²², որի մասին նրա պնդումները, ինչպես կտեսնենք, չեն շեղվում XIX դ.—XX դ. սկզբի մյուս հեղինակների հայտնի գրույթներից, ընայած վերջիններիս համեմատ ներկայանում են ավելի ուշագրավ, լայնահուն նկատառումներով:

Գրականության մեջ քանիցս արծարծվել, բայց տակավին ստույգ չի գնահատվել Ս. Եղիազարյանցի մեկ այլ կարևոր ամփոփումը: Ըստ այնմ, ամբողջ հողը իմամի ժառանգի՝ պետության գլխավորի, սեփականություն հռչակող Ղորանի սահմանումները «մասամբ ժողովրդի արագ զարգացող տնտեսական կյանքի ազդեցությամբ, մասամբ մահմեդական պետություններում կենտրոնական իշխանության թուլության հետևանքով... դարձել էին անբովանդակ ֆիկցիա»²³: Սույն տողերը նույնիսկ մեկնաբանվել են այն իմաստով, թե իբր Ս. Եղիազարյանցի համոզմամբ մուլքադարական իրավունքի էությունն էլ մուլքատու գյուղի մասնավոր սեփականատիրումն էր²⁴: Մինչդեռ, այստեղ ևս Ս. Եղիազարյանցին հետաքրքրել են ոչ թե մուլքադարների (ու թիուդարների) գյուղատիրական իրավունքները, այլ՝ մուլքատու գյուղի այն հողամասերը, որոնք տարբեր ճանապարհներով դառնում էին նրանց (և ուրիշ մարդկանց), իբրև անհատ տնտեսատերերի, սեփականություն՝ հակառակ Ղորանի սահմանումների: Դա էլ Ս. Եղիազարյանցին հիմք է տվել ընդգծելու համայնքի «համադասյնություն» այն նկատառումով, որ համայնիկ շինականներից բացի նույն համայնքում հողագործությամբ էին զբաղվում նաև բեգերից, մելիքներից, աղաներից, առևտրականներից ու հայ հոգևորականներից ոմանք²⁵: Բայց տեսնենք, թե նա կոնկրետ ի՞նչ առիթով է շեշտել Ղորանի սահմանումների բովանդակազրկությունը:

Քննելով Թափուական վարձակալական հողատիրության հարցը, Ս. Եղիազարյանցը նշել է, որ Թափուն առաջանում էր համայնական բաժնեհողերից դուրս²⁶: Վերջիններիս տնօրենը բացառապես համայնքն էր. գյուղատերը (օրինակ՝ բեգ մուլքադարը), որը նույն գյուղ-«կալվածքի» սահմաններում կարող էր ունենալ առանձին սեփական հող, համայնական բաժնեհողերի նկատմամբ միայն հարկադանձման (բահրայի որոշակի մասը ստանալու) իրավունք ուներ²⁷: Այստեղ էլ Ս. Եղիազարյանցը հարց է առաջադրել՝ արդյո՞ք տարօրինակ է, որ գյուղատերը «կալվածքի» որոշ կարգի հողեր տնօրինում էր անսահմանափակ ու դրանք կարող էր տալ նաև անժամկետ պայմանագրային (Թափուական) վարձակալության, իսկ մյուս հողերից օգտվում էր լոկ բահրատիրման

21 Նույն տեղում, էջ 137—138, 149, 224, 227:

22 Նույն տեղում, էջ 3, 292:

23 С. А. Егиазаров, *Формы общины и крестьянского землевладения в Тифлисской губернии* («Свод материалов», т. II, с. 416); «Сельская община», с. 137—138.

24 Հ. Ծ. Թ ու մ ա ն յ ա ն, *Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը*, Երևան, 1960, էջ 242—252:

25 «Сельская община», с. 1—2; С. А. Егиазаров, *Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии* («Свод материалов», т. I, Тифлис, 1887, с. 9, 12). Հայկական գյուղական համայնքի «համադասյնությունը» վերաբերող Ս. Եղիազարյանցի գրույթներին ու եզրակացություններին կանգրդառանք առանձին:

26 «Свод материалов», т. II, с. 416.

27 Նույն տեղում: Ս. Եղիազարյանցը «կալվածք» բառն օգտագործել է և՛ առանձնաշնորհված բահրատու գյուղի, և՛ նրա տարածքում բեգա-մասնատիրական առանձին (տերունի) հողերի և գյուղացիական-թափատիրական մուլքերի վերաբերմամբ:

իրավունքով²⁸։ Հարցի պատասխանը տեսնելով «Արևելքի կալվածային համակարգի» առանձնահատկության մեջ, նա շի համաձայնել ռեալական տարածված տեսության հետ, ըստ որի «կալվածքները տրվում էին ծառայող դասի մարդկանց լոկի ի օգտագործումն» առանց նրանց սեփականության իրավունք հատկացնելու²⁹։ Ասել է թե՛ գյուղ-«կալվածքի» նկատմամբ բահրատիրման իրավունքից բացի գյուղատերն իրավունք է ունեցել նույն գյուղում հողեր սեփականացնելու։ Սա է Ս. Նիդազարյանցի եզրակացության իմաստը։ «Արևելքի սովորական կալվածքում» նա տարբերանշել է երեք կարգի հողեր. ա) բաժնե-հողեր՝ համայնքի տնօրինության մասնահանումով հօգուտ գյուղատիրոջ, բ) ախլասեզեր, գ) մագրա-հողեր³⁰։

«Ախլան», ըստ Ս. Նիդազարյանցի, անորոշ մեծություն էր, և յուրաքանչյուր գյուղ, անկախ տարածքից (նաև՝ հարկման ենթակա տարեկան հողարդյունքի չափից) բաղկացած էր վեց ախլայից³¹։ Միաժամանակ Նրևանի սարդարությունում «ախլա» էր կոչվում գյուղի մշակելի հողի $\frac{1}{10}$ -ը, որը տրամադրվում էր գյուղատերերին՝ «սկզբում... բացառապես տիրման, հետագայում՝ մասնավոր սեփականության իրավունքով»³²։ «Մագրան» Ս. Նիդազարյանցը մեկնաբանել է այնպես, ինչպես Ն. Տորնաուն՝ «մավաթը», միայն թե այդ կարգի (անհատական նախաձեռնությամբ մշակելի դարձած) հողերը նույնացրել է «խալխսերին», վերջինս էլ՝ բնորոշել իբրև հողի մասնավոր սեփականություն³³։ Սույն կապի մեջ նա շրջանցել է «խալխս» տերմինի մեկ այլ նշանակություն, հանգամանք, որը մասնակի հիմք է ծառայել Ի. Պետրուշևսկու այն դրույթին, թե խալխսները նույն «մուլք-ե խասս վա խալխս» հողերն էին՝ գյուղերն իրենց բնակիչներով, որոնք կարող էին լինել «մասնավոր մարդկանց, անձամբ շահի, խանի կամ իշխող դինաստիայի անդամների» սեփականություն³⁴։ Մեր կարծիքով հիմնավոր են Ս. Մարկոսյանի դիտողությունները՝ խալխս կամ խասս հողերը խալխս գյուղերից, այսինքն՝ դիվանի կամ պետական գյուղերից, տարբերելու մասին³⁵։ Նա փափաջանի հետազոտությունները պարզում են, որ պետական այն գյուղերը, որոնց եկամուտներն ամբողջապես հատկացվում էին տարբեր վայրերում ծառայող պաշտոնյաներին ու զինվորականությանը և ենթակա էին կենտրոնական ֆինանսական տեսչության տնօրինությանը, կոչվում

28 Նույն տեղում։ Իր նկատառումը սույն հարցադրման առթիվ Ս. Նիդազարյանցն ավելի հստակ ձևակերպել է մեկ այլ աշխատության մեջ. «Կալվածատիրոջը ինչպես սեփականություն պատկանում է մի կտոր հող ռալլա տեղ» անունով. մնացած հողը համայնքին է պատկանում, որի բերքից կալվածատերը ստանում է $\frac{1}{6}$, $\frac{1}{7}$, $\frac{1}{10}$... Այս ի՞նչ իրավաբանական կարգ ու կանոն է, որ կալվածատերը հողատեր (землевладелец) է և միևնույն ժամանակ սեփականատեր է» (Ս. Նիդազարյանց, Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում, մեր երկրի հայաբնակ մասում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1882, էջ 4—5, հմմտ.՝ «Сельская община», с. 292)։

29 «Сельская община», с. 292.

30 Նույն տեղում, էջ 417։

31 «Свод материалов», т. II, с. 417; «Сельская община», с. 18.

32 «Свод материалов», т. II, с. 417. Ս. Նիդազարյանցի մեկ այլ ձևակերպմամբ «ախլային հողը առանձնաշնորհվում էր կալվածատիրոջը կամ բացառիկ տիրման իրավունքով կամ մասնավոր սեփականության իրավունքով» («Сельская община», с. 18)։

33 «Свод материалов», т. II, с. 417; «Сельская община», с. 16—17.

34 Ի. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 237։

35 Ս. Սարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում XVII—XVIII դդ. և XIX դարի առաջին քառորդում, Նրևան, 1959, էջ 95—103։ Խալխս հողը կամ խասս հողը լոկ տեխնիկական առումով էր նույնիմաստ մագրային, որպիսի թե մեկ, թե մյուս անվան տակ հասկացվում էին արդեն մշակվող հողերն՝ ի տարբերություն խամ հողերի։ Բայց մագրաները իրավականորեն և տարածականորեն արտահամայնական էին, անհատական նախաձեռնությամբ «կենդանացվել» էին պարագ, «մեռյալ» կամ երբեմնի լքված, խամացած հողերից (տե՛ս նույն տեղում, էջ 99)։

էին դիվանի, իսկ այն գյուղերը, որոնք անմիջապես հատկացվում էին տեղական իշխանությունների տնօրինությանը՝ սովորաբար կոչվում էին խալիսե, ինչն առհասարակ վավերագրերում մուլքի՝ իբրև ապահարկված տիրույթի, իմաստ չունի³⁶, Ինչ վերաբերում է խասս գյուղերին, ապա դրանք արքունի, թագավորական ընտանիքի անդամներին պատկանող կալվածքներ էին, որոնցից ստացվող եկամուտները XVII—XVIII դդ. չէին տրվում որպես ռոճիկ³⁷:

Այսպիսով, Ս. Նղիազարյանցը խոսել է Ղորանի սահմանումների բովանդակազրկության մասին՝ նկատի ունենալով ժառանգաբար փոխանցվող (այդ թվում և՛ գյուղացիական-ծխատիրական) մուլքերը, տնամերձերը, ցանկապատված տեղերը, մազրաները, ախլատեղերը՝ Նույն նկատառումն են ամփոփում նրա հետևյալ տողերը. «Որ համայնքը գոյություն է ունեցել և գոյություն ունի ոչ միայն մի ժամանակ Հայաստանի կաղմի մեջ մտած Անդրկովկասի շրջաններում, այլև ամբողջ Պարսկաստանում և Փոքր Ասիայում—դա փաստ է, բայց մյուս կողմից, հողային մասնավոր սեփականության միաժամանակյա գոյությունը նույնպես կասկածի ենթակա չէ»³⁸, Ս. Նղիազարյանցը պնդել է վերահիշյալ հողերի մասնավոր սեփականատիրական բնույթը՝ շեշտը գնելով ոչ թե հողագույքային իրավաբանական իրավունքի, այլ սովորութային իրավունքի վրա, որը չէր սահմանազատում ժառանգական տիրումը մասնավոր սեփականատիրությունից³⁹, Նա նշել է, որ իրավագիտորեն տարբեր այդ երկու ինստիտուտներն իրենց առավել կիրառելի բաղադրատարրերով (ինքնակամ տնօրինում, օտարում) այստեղ սովորութական իրավունքով նույնացվում էին⁴⁰, Ընդգծելի է Ս. Մարկոսյանի այն դիտողությունը, որ այդօրինակ նույնացումը պայմանավորված էր ոչ թե բնակչության իրավագիտական մտահոգիչների թերդարգացածությամբ, ինչպես կարծել է Ս. Նղիազարյանցը⁴¹, այլ իրական հարաբերություններով⁴², Կ. Մարքսը, ֆեոդալական աշխատավճար ռենտան վերլուծելիս Ասիայում ռենտայի և հարկի համընկնումը բացատրել է այն հանգամանքով, որ «պետությունն այստեղ գերագույն հողատերն է։ Գերիշխանությունն այստեղ ազգային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականությունն է։ Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականություն չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրում ու օգտագործում»⁴³։ Մի կողմից մասնատիրական իրավունքների ու պարտականությունների լիակատար փոխանցումները կամ ժառանգական ստանձնումը, մյուս կողմից՝ հողային տարբեր գործարքների նկատմամբ պետության անտարբերությունը իրական հիմքն էին արևելահայ բնակչության այն իրավաբանական, որը հողի ժառանգական տիրումը նույնացնում էր մասնավոր սեփականության հետ։ Բոլոր այդ գործարքները, ներառյալ և հողի օտարումը, չէին շղջափում պետության դանձահասութային շահերը և չէին խախտում հողի պետական ֆեոդալական սեփականության սկզբունքը⁴⁴:

Վերևում շարադրվածն արծարծում է հողային հարաբերությունների այլևայլ կարևոր հարցեր, որոնց ուսումնասիրման պատմագրական վերլուծության

36 «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 258, Ա. Դ. Папазян, նշվ. աշխ., էջ 104—107:

37 «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 260, Ա. Դ. Папазян, նշվ. աշխ., էջ 107—109:

38 «Сельская община», с. 150.

39 Նույն տեղում, էջ 151—152, նաև՝ «Свод материалов», т. I, ч. I, с. 9.

40 «Сельская община», с. 151—152.

41 Նույն տեղում, էջ 151:

42 Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 18, 108:

43 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, Երևան, 1949, էջ 329:

44 Ս. Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 104—122, В. А. Дилоян, Восточная Армения в первой трети XIX столетия и армяно-русские отношения (автореферат докторской диссертации), Ереван, 1974, с. 24—25.

հնարավորությունը չունենք այստեղ Նշենք, որ գրանցից հանգուցայինն ու ե-
յակետայինը հողի տնտեսական իրացման ձևի՝ ֆեոդալական ռենտայի հարցն
է, որի քննությամբ միայն հողային սեփականությունը ներկայանում է ոչ իբրեւ
հողի իրային-առարկայական տնօրինում, այլ՝ իբրեւ հասարակական հարաբե-
րություն և՛ բացահայտվում արտադրողների շահագործման միևնույն ֆեոդա-
լական էությունը, անկախ սեփականության կոնկրետ ձևից: Ս. Նդիազարյան-
ցը, Լինելով տնտեսականորեն սխալ մեկնակետից, ըստ էության անգիտացել է
հիմնական հարցը, երբ, ի հաստատումն Արեւելյան Հայաստանի խանություն-
ներում հողի մասնավոր սեփականության գոյության վերաբերյալ իր դրույթի,
փաստարկել է նաև շահագործվող դասակարգի մասնի գյուղացիական մուլքերի
անժամկետ օգտագործումը, ժառանգական փոխանցումները: Նրա իսկ ակնար-
կած սովորությունից իրավունքի տեսանկյունից այդ դրույթի համար եղակի
փաստարկ է մնում վերոհիշյալ տերունի հողերի ինքնակամ տնօրինումը: Սա-
կայն դրանց անհամեմատ փոքր չափերն ու երկրորդական տնտեսական նշա-
նակությունն էլ (մի երկրում, որի մահմեդական բարձր դասը՝ իր մեծագույն
մասով, հիրավի, պորտաբույծ ու պարապ կյանքի⁴⁵ համբավ է վաստակել) չեն
արդարացնում այն հայտարարությունը, թե հողն ամենուրեք իմամի ժառանգի
սեփականություն հռչակող Ղորանի սահմանումներն իրականում անբովան-
դակ էին:

Անբերկրմաստ ու հետևողական է Ս. Նդիազարյանցի տեսակետը մուլքա-
դարության վերաբերյալ: Պետք է միայն ստույգ վերարտադրել-ընթերցել նրա
առաջադրած յուրօրինակ պատմական գուգահեռներն ու ձևակերպումներն այդ
առթիվ: «Մուլքադարական իրավունքը, — գրել է Ս. Նդիազարյանցը, — նմա-
նություն ունի հին ռուսական պոմեստյեյի և ուշինային իրավունքի հետ, նա-
յած այն բանին՝ պարզեանշնորհվում էր մուլքը [поместье-ն] ժամանակավո-
րապես, թե՛ ժառանգաբար փոխանցելու իրավունքով»⁴⁶: Այստեղ ակնարկված
է ոչ թե առանձնաշնորհման առարկաների նույնությունը, այլ՝ էապես տարբեր
առանձնաշնորհումների լոկ իրավաբանական կազմերի նմանությունը: Ըստ
Ս. Նդիազարյանցի, մուլք-պոմեստյեյի հատկանիշը ժամանակավորապես շը-
նորհված «կալվածք» (գյուղի) տնօրինման սահմանափակությունն էր և
սկզբից ևեթ հանգում էր հարկազանձման, քանի դեռ գյուղատերն անսալ-
թաք շարունակում էր ծառայությունը⁴⁷: Նրա կարծիքով այդպիսի շնորհումը
համապատասխանում էր հին ռուսական «կերակրման կարգին»⁴⁸: Անուհետև
«կալվածքը» կարող էր նմանվել ուշինային, երբ փոխանցվում էր ժառանգա-
բար⁴⁹, բայց փոխանցման առարկան ոչ թե գյուղն էր բաժնեհողերով՝ իբրեւ հո-
ղային մասնավոր սեփականություն, այլ՝ մուլքի, իբրեւ բահրայի մի մասի,
գանձման իրավունքը: Այլ կերպ ասած, առանձնաշնորհումը փոխանցվում էր
իր իրավաբանական կազմով, և անձնական-բնեֆիցյալ տիրույթը դառնում էր
ժառանգական տիրություն⁵⁰, որի առարկան երկու դեպքում էլ լոկ հարկաբա-
ժինն էր: Արդ՝ Ս. Նդիազարյանցի համոզմամբ մուլքադարությունը, մինչև
Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միացումը, մնաց զարգացման նա-
խորդ անտիճանին, դուրս չեկավ. «կերակրման կարգի» սահմաններից և, ի
տարբերություն ուշ միջնադարի ռուսական ուշինայի, «կամաց-կամաց չդար-
ձավ» հողի մասնավոր սեփականություն. «պարսից կառավարիչ-մուլքադար-

⁴⁵ Հանրահայտ փաստ է սա՝ արձանագրված սովետական մի շարք հետազոտողների աշ-
խատություններում:

⁴⁶ «Сельская община», с. 3.

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում, նաև՝ Ս. Նդիազարյանց, Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպա-
յում, մեր երկրի հայաբնակ մասում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, էջ
16—17:

⁴⁹ «Сельская община», с. 3.

⁵⁰ Նույն տեղում:

ները սեփականատեր չէին»⁶¹, այլ՝ բաճրայի «հասարակ, ժամանկավոր տիրապետողներ»⁶², Որպես այդպիսին էլ մուքադարությունն Արևելյան Հայաստանում «ամեռավ, բայց ոչ թե բնական, այլ արվեստական ու տարածած մահով»⁶³, իսկ այն, ինչը նույն անվան տակ տեսնում ենք 1840-ական թվականներից հետո, նախկին մուքադարության բնականոն դարգացման հետևանքը չէր, նորը, ըստ Ս. Նղիազարյանցի, ուսական «օրենքներով... մտցված» ժառանգական մուքադարությունն էր, որով «հողի տիրողը դարձավ լիակատար սեփականատեր, բայց հողի որոշած մասի վրա»⁶⁴, Այդ օրենքներով «փոխվել է (մուքադարության) — Ս. Ա.) իրավաբանական կազմվածքը, բայց փոփոխությունը վերաբերում է իրավունքի հատկությանը և ոչ թե չափին-քանակությանը»⁶⁵, Այստեղ ակնարկված են մուքադարներին հասանելի բաճրայի, ի դեպ՝ Ս. Նղիազարյանցի կողմից թյուրմբռնված իբր երեք տարբեր չափերը (հողարդյունքի 1/6-ը, 1/7-ը, 1/10-ը), որոնք «տեղական հին սովորությանը և կանոնների զորությունը մնում են միևնույնը, ինչ պարսից տիրապետության ժամանակ»⁶⁶, Մուքադարները, ի տարբերություն եվրոպական կալվածատերերի, ինքնակամ չէին կառուց փոխել դրանք, չնայած՝ «վերջին տարիներում (1870—1880-ական թվականներին—Ս. Ա.) աշխատել են իրենց իրավունքի ֆանակությունը, հիմնվելով ուսաց օրենքների վրա, ընդարձակել ու լայնացնել»⁶⁷, Ասել է թե՛ «ճվրռպայում կալվածատիրոջ իրավունքը տարածվում էր գյուղի կամ կալվածքի ամբողջության վրա, մինչդեռ մեզանում միայն հողի որոշյալ մասի վրա, որի չափը կախված է ստացած եկամտի քանակությունից»⁶⁸, Այս միտքը պարզելու համար, Ս. Նղիազարյանցը նշել է, որ եթե որևէ համայնք կամենա հողը դնել մուքադարից, պետք է վճարի ոչ թե «բոլոր հողի ամբողջության գինը, այլ միայն մի մասի»⁶⁹, Այստեղ չենք անդրադառնում այն երկրատու գրասենյակային քաջքշուկին, որի մեջ պետք է «լուծվեր» հողի հետգնման գին և շինական պարտությունների «համալսականության» հարցը՝ սկսած 1860-ական թվականներից մինչև 1912 թ.։ Ընդգծենք միայն Ս. Նղիազարյանցի վերջին ամփոփումը, ըստ որի նոր իրավունքով օժտված «մուքադարներին կարելի է անվանել սեփականատեր, բայց նրանց սեփականությունը սաստիկ տանձառաքիչված է»⁶⁰, այսինքն (համաձայն նրա նախընթաց դրույթների)՝ հատկանշվում էր հողարդյունքի մի բաժնի ու դրան համեմատ հողի «որոշյալ մասի» ժառանգական տիրմամբ։

Այսպիսով, Ն. Տորնաուի և Ս. Նղիազարյանցի նկատառումներն Արևելյան Անդրկովկասի պարսկական խանություններում հողի մասնավոր սեփականության գոյության վերաբերյալ չեն շոշափում խանությունների «բարձր դասի» գյուղատիրական (մուքադարական ու թիուդարական) իրավունքների հարցը։ Նրանք, ինչպես և XIX դ.—XX դ. սկզբի այլ հեղինակներ, նշում էին, որ այդ իրավունքների բովանդակությունը հողի սեփականատիրոջ՝ պետության, կողմից արքունի հարկաբաժնի առանձնաշնորհումն էր ծառայանում։ Սույն առիթով մեր հետազոտողներից շատերը պարզապես կրկնել են Ի. Պետրուշևսկու մի դրույթը, ըստ որի XIX դ. պատմագրությունը «խտեց մուքադարների ու թիուդարների սեփականատիրական նախկին (մինչև 1846 թ.) իրավունքները

61 Ս. Նղիազարյանց, Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում, մեր երկրի հայրենակ մասում և մեր գյուղացու ավժմյան տնտեսական դրությունը, էջ 17, 22,

62 Նույն տեղում, էջ 23:

63 Նույն տեղում, էջ 19—20:

64 Նույն տեղում, էջ 20—21:

65 Նույն տեղում, էջ 23:

66 Նույն տեղում:

67 Նույն տեղում, էջ 23—24:

68 Նույն տեղում:

69 Նույն տեղում, էջ 24:

60 Նույն տեղում:

նրանց պատկանող գյուղերի (բահրատու հողային հողվածների ու բնակիչների) նկատմամբ՝ քաղաքական նկատառումներով⁶¹։ Բայց այդ դրույթը չի հիմնավորվում ոչ միայն սկզբից ևեթ տեղական ժողովրդի սոցիալ-գաղափարաբանությամբ⁶², այլև՝ առանձին պատմագրական փաստերի համադրումով։ Ինչպե՞ս մեկնաբանենք XIX դ. հեղինակներից ոմանց վերագրվող «շեղումները» մուսուլմանության և թուրքարության վերաբերյալ ժամանակին գոյություն ունեցող տեսակետից, եթե փորձենք վերջինիս ձևավորումը կապել մեր որոշ հետազոտողների մատնանշած քաղաքական շարժառիթներին։ Եթե, հետևելով Ա. Սալյանին, ընդունենք, որ «թուրքական ավելի զգույշ հեղինակներից»⁶³ մեկի՝ Ն. Տորնաուի, այդօրինակ «շեղումները» հողի (մուսուլման գյուղի) մասնավոր կալվածատիրական սեփականատիրումը հավաստելու իմաստ ունենին (հակառակ Ի. Շոպենի և մյուսների մեկնաբանության), ապա անբացատրելի կմնա, թե ինչու էր նրան արտոնված խույս տալ քաղաքական պատմից։ Մինչդեռ, Ն. Տորնաուն Ի. Շոպենի ժամանակակիցն էր, երկար տարիներ եղել էր Թեհրանի ռուսական դեսպանության քարտուղարը և, ինչպես ինքն է գրել՝ «հինգ տարի մշտապես եղել է Արևելքում՝ մասնակցելով Կասպիական մարզի կառավարմանը»⁶⁴։ Ցարիզմի քաղաքականությունը կիրառողներից մեկն էր նա ալատի, ինչպես Ի. Շոպենը՝ Հայկական մարզում, իսկ նրա՝ կալսերը նվիրված «Մուսուլմանական օրենսդրության հիմունքների շարադրանքը» անցել էր գրաքննությամբ դեռ 1849 թ., մինչև Ի. Շոպենի հայտնի աշխատության լույս ընծայումը (1852 թ.)։

Այսուհանդերձ, կարևորը պատմագրական դուգահեռները չեն։ Առհասարակ ուշ միջնադարի Արևելյան Հայաստանի հարաբերությունների ուսումնասիրման պատմությունը մեր պատմագիտական գրականության մեջ ներկայացված է առանձին հեղինակների դրույթների (ինչպես տեսանք՝ երբեմն շտապ ու մակերեսային) գնահատումներով և ոչ թե նրանց գործերի կամ առավել հանգուցային հարցերին վերաբերող ամբողջական ամփոփումների համադիր վերլուծությամբ։ Իհարկե, այդպիսի վերլուծությունները պահանջում են պատմագրական ծավալուն հետազոտություններ՝ և՛ նյութի ընդգրկման, և՛ հատկապես տեսական-մեթոդոլոգիական լայն տեսանկյուններից։ Բայց մինչ այդ էլ կարելի էր շատ դժպքերում կանխել շտապողականությունն ու մակերեսայնությունը՝ տարաբնույթ պատմագրական փաստերի ուշադիր ընթերցմամբ։

ИЗ ИСТОРИИ ИЗУЧЕНИЯ АГРАРНЫХ ОТНОШЕНИЙ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

САМВЕЛ АЛЕКСАНЫ

Резюме

Подробное изучение трудов представителей дореволюционной историографии Н. Торнау и С. Егиазарова показывает, что они не отождествляли муллкадарское право в Ереванском ханстве с правом частной собственности на землю, как считает ряд советских исследователей.

61 Այդ մասին տե՛ս ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1977, № 2, էջ 49—51։

62 Նույն տեղում, էջ 48—63։

63 А. М. Есаян, նշվ. աշխ., էջ 24։

64 Н. Е. Торнау, Изложение начал мусульманского законовещения, предисловие.